Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 26 -ի N 356 - Լ որոշման

ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ

1. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. Միջոցառման նպատակն է օժանդակել ՀՀ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող առանձին տնտեսավարողներին (այսուհետ՝ տնտեսավարողներ)՝ կորոնավիրուսի տարածման հետևանքով վերջիններիս մոտ կանխատեսվող ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը մեղմելու համար:

2. Օժանդակության նպատակն է տնտեսավարողների համար ստեղծել ֆինանսական միջոցների ժամանակավոր հասանելիության հնարավորություն՝ պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ըստ այդմ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունները ճշտգրտելու գործողություններ իրականացնելու համար:

2. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՉԵՎԵՐԸ

3. Սույն միջոցառման իմաստով տնտեսավարող է համարվում ՀՀ տարածքում գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, անհատ ձեռնարկատերը, որը ունի բարվող վարկային և հարկային (իրավաբանական անձանց դեպքում) պատմություն, այսինքն՝ անցած 365 օրերի ընթացքում ներառված ամբողջական հաշվետու ժամանակաշրջանների համար ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների չափը չի գերազանցել անցած 365 օրերի ընթացքում վճարված պարտավորությունների 1 տոկոսը, բայց ոչ ավել քան 50 հազար դրամը:

4. Օժանդակությունը տրամադրվում է տնտեսավարողներին՝ ՀՀ տարածքում գործող և լիցենզավորված բանկերից կամ վարկային կազմակերպություններից (այսհուհետև՝ ֆինանսական կազմակերպություն) ստացվող նպատակային վարկերի

համաֆինանսավորման և (կամ) վարկի/լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով: Օժանդակության նախատեսվող ձևերով նպատակ է հետապնդվում լուծել.

1) Համաֆինանսավորում. վարկի գծով տնտեսավարողի մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի, արժութային ռիսկի մասնակի չեզոքացման, ինչպես նաև տոկոսների գծով ծախսերի մասնակի նվազեցման խնդիրները.

2) Սուբսիդավորում. վարկի/լիզինգի գծով տնտեսավարողի մոտ տոկոսային ծախսերի էական նվազեցման խնդիրը:

5. Գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի միաժամանակյա կիրառության սահմանափակումները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի 14-րդ կետի համաձայն:

6. Օժանդակության կիրառության պայմանները ներկայացված են NN 1, 2, 3 և 4 աղյուսակներում:

7. Վարկի (լիզինգի) սուբսիդավորումը, NN 1, 2, 3 և 4 աղյուսակներում նշված տոկոսադրույքներով, կիրականացվի միայն սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը տրամադրվող վարկի (լիզինգի) համար:

3. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐՔՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ (ԼԻԶԻՆԳԻ) ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Օժանդակության ձևերը կիրառելի են այն վարկի (լիզինգի) համար, որը տրամադրվում է տնտեսավարողներին NN 1, 2, 3 և 4 աղյուսակներում սահմանված նպատակներով ծախսերի իրականացման համար:

9. Օժանդակության գործիքների կիրառմամբ տրամադրվող վարկը (լիզինգը) պետք է համապատասխանի NN 1, 2, 3 և 4 աղյուսակներում սահմանված պահանջներին:

10. Վարկը (լիզինգը) կտրամադրվի գյուղատնտեսության ոլորտում պետական օժանդակության ծրագրերին մասնակից առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից:

11. Սույն հավելվածի 4-րդ կետում նշված օժանդակության համաֆինանսավորման գործիքի կիրառման կարգը կսահմանվի ՀՀ կառավարության որոշմամբ: Օժանդակության սուբսիդավորման գործիքի կիրառման ընթացակարգերը պետք է

համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության առանձին որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերի ընթացակարգերին:

4. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

12. Սույն միջոցառման շրջանակում վարկ (լիզինգ) ստանալու նպատակով ցանկացած տնտեսավարող, որը համապատասխանում է միջոցառմամբ նախատեսված պայմաններին, կարող է հայտ ներկայացնել ֆինանսական կազմակերպություն, որի բավարարման դեպքում վարկառուի ցանկությամբ սույն միջոցառմամբ աղյուսակներ 1-ով, 2-ով, 3-ով և 4-ով սահմանված պայմանների համաձայն կիրականացվի՝

1) վարկի համաֆինանսավորում՝ մայր գումարի որոշակի չափով, վարկի նույն ժամկետով, համաֆինանսավորման մասի 0% տոկոսադրույքով, վարկի մայր գումարի վերադարձի մասով՝ մասնակի ռիսկի ստանձնմամբ, և (կամ)

2) վարկի/լիզինգի սուբսիդավորում՝ տվյալ վարկի (լիզինգի) տոկոսների չափով, առանց վարկի վերադարձի ռիսկի ստանձնման:

Աղյուսակ 1

Իրավաբանական (բացառությամբ՝ գյուղատնտեսական կոոպերատիվների) և ֆիզիկական անձանց վարկավորման հիմնական պայմանները

	Վարկի նպատակը	Հիմնական պայմանները	Տոկոսադրույքը*
1	Գյուղատնտեսության ոլորտում զբաղված անձանց կարողությունների զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով տրամադրվող վարկ	· **վարկի գումարը՝ 3-15 մլն դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ մինչև 5 տարի,** · **վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 12 ամիս**	0%
2	Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկ	· **վարկերի հանրագումարի մնացորդը՝ մինչև 150 մլն դրամ,** · վարկի մարման ժամկետը՝ մինչև 3 տարի, · մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ տարեկան մինչև 6 ամիս	0%
3	Խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար տրամադրվող վարկ	· **մակերեսը՝ 0.5-ից մինչև 100 հա,** · **վարկի գումարը՝ մինչև 2.5 մլրդ դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ 8 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ 5 տարի**	0%

4	Գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկ	· **մակերեսը՝ 0.5-ից մինչև 10 հա,** · **վարկի գումարը՝ մինչև 85 մլն դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ 7 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետ՝ 1 տարի**	0%
5	Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկ	· **վարկերի մայր գումարի մնացորդը՝ մինչև 1.8 մլրդ դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ մինչև 1.5 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ 2-3 ամիս**	0%
6	Տոհմային տավարաբուծության նպատակով տրամադրվող վարկ	· **վարկերի հանրագումարի մնացորդը՝ մինչև 300 մլն դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ մինչև 5 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 1 տարի**	0%
7	Տոհմային ոչխարաբուծության և այծաբուծության նպատակով տրամադրվող վարկ	· **վարկերի հանրագումարի մնացորդը՝ մինչև 900 մլն դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ մինչև 4 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 1 տարի**	0%
8	Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ	· **20% կանխավճար,** · **Լիզինգի առարկաների ընդհանուր գումարը՝ մինչև 200 մլն դրամ,** · **մարման ժամկետը՝ 3- 10 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ տարեկան մինչև 6 ամիս:**	0%
9	Ագրոպարենային ոլորտի սարքավորումների (այդ թվում՝ ջերմատների, սառնարանային և գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունների, մոդուլային սպանդանոցների) լիզինգ	· **20% կանխավճար,** · **Լիզինգի առարկաների արժեքների հանրագումարը՝ մինչև 450 մլն դրամ** · **մարման ժամկետը՝ մինչև 8 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ տարեկան մինչև 6 ամիս:**	0%

* Պայմանով, որ բանկի փաստացի տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ դրամով 14%, իսկ արտարժույթով՝ 9%

Աղյուսակ 2

Գյուղատնտեսական կոոպերատիվների վարկավորման հիմնական պայմանները

	Վարկի նպատակը	Հիմնական պայմանները	Տոկոսադրույքը*	Համաֆինասավորում/ Համապարտություն
1	Գյուղատնտեսության ոլորտում գործունեության նպատակով տրամադրվող վարկ	· **վարկի գումարը՝ 3-15 մլն դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ մինչև 5 տարի,** · **վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 12 ամիս**	0%	10%

2	Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկ	· **վարկերի հանրագումարի մնացորդը՝ մինչև 150 մլն դրամ,** · վարկի մարման ժամկետը՝ մինչև 3 տարի, · մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ տարեկան մինչև 6 ամիս	0%	50%
3	Խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար տրամադրվող վարկ	· **մակերեսը՝ 3-ից մինչև 100 հա,** · **վարկի գումարը՝ մինչև 2.5 մլրդ դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ 8 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ 5 տարի**	0%	50%
4	Գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկ	· **մակերեսը 3-ից մինչև 10 հա,** · **վարկի գումարը՝ մինչև 85 մլն դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ 7 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետ՝ 1 տարի**	0%	50%
5	Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկ	· **վարկերի մայր գումարի մնացորդը՝ մինչև 1.8 մլրդ դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ մինչև 1.5 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ 2-3 ամիս**	0%	30%
6	Տոհմային տավարաբուծության նպատակով տրամադրվող վարկ	· **վարկերի հանրագումարի մնացորդը՝ մինչև 300 մլն դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ մինչև 5 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 1 տարի**	0%	70%
7	Տոհմային ոչխարաբուծության և այծաբուծության նպատակով տրամադրվող վարկ	· **վարկերի հանրագումարի մնացորդը՝ մինչև 900 մլն դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ մինչև 4 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 1 տարի**	0%	70%
8	Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ	· **20% կանխավճար,** · **Լիզինգի առարկաների ընդհանուր գումարը՝ մինչև 200 մլն դրամ,** · **մարման ժամկետը՝ 3-10 տարի,**	0%	10%

		· **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ տարեկան մինչև 6 ամիս:**		
9	Ագրոպարենային ոլորտի սարքավորումների (այդ թվում՝ ջերմատների, սառնարանային և գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունների, մոդուլային սպանդանոցների) լիզինգ	· **20% կանխավճար,** · **Լիզինգի առարկաների արժեքների հանրագումարը՝ մինչև 450 մլն դրամ,** · **մարման ժամկետը՝ մինչև 8 տարի,** · **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ տարեկան մինչև 6 ամիս:**	0%	10%

* Պայմանով, որ բանկի փաստացի տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ դրամով 14%, իսկ արտարժույթով՝ 9%:

Աղյուսակ 3

Ֆիզիկական անձանց միկրովարկավորման հիմնական պայմանները

	Վարկի նպատակը	Հիմնական պայմանները	Տոկոսադրույքը*
1	Գյուղատնտեսության ոլորտում գործունեության նպատակով տրամադրվող միկրովարկ	· **վարկի գումարը՝ մինչև 1 մլն դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ մինչև 2 տարի,** · **վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 9 ամիս**	0%

* Պայմանով, որ բանկի փաստացի տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ դրամով 13%:

Աղյուսակ 4

Ֆիզիկական անձանց՝ խոզաբուծության և թռչնաբուծության վարկավորման պայմանները

	Վարկի նպատակը	Հիմնական պայմանները	Տոկոսա-դրույքը*	Համաֆինասա-վորում (համապարտու-թյուն)
1	Խոզաբուծության և թռչնաբուծության նպատակով տրամադրվող վարկ	· **վարկի գումարը՝ 3-15 մլն դրամ,** · **վարկի մարման ժամկետը՝ մինչև 3 տարի,** · **վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 12 ամիս**	0%	30%

* Պայմանով, որ բանկի փաստացի տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ դրամով 14%, իսկ արտարժույթով՝ 9%:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ